

Հայաստանի նախագահ Ռուպերտ Բոչարեան 20 Ապրիլին ժամանեց Արարական Միացյալ Էմիրություններ: Բանակցություններու ընթացքին ստորագրուեցան համաձայնագիրներ տնտեսական - առևտրական եւ գիտական - արհեստագիտական բնագաւառներէն ներս գործակցութեան մասին:

Ստորագրուած են նաեւ գործակցութեան համաձայնագիրներ ճարտարարուեստի, փոխադրամիջոցներու, հաղորդակցութեան, կրթութեան, դրամատնային համակարգերու եւ ներդրումներու մարպերէն ներս, ինչպէս նաեւ Հայաստան - Արարական Միացյալ Էմիրություններ յարաբերություններու իրաւական հիմքին առնչութեան *փորձագոյ* մը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՐԳԻԼԷ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ԲՆԱԿԵՑՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՁ

Կ'ԸՍԷ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՅՈՒՑ



Չոր. Լահուտ կը պատասխանէ լրագրողներու հարցումներուն: Լուսանկարը առնուած է պատկերասփիւռէն:

Շրջապալի մէջ, այդ շրջանը բազմազան էր: Մագարէ՛՛ Շրջապալի Լիբանանի իրաւունքն է, իսկ «Կապոյտ Գիծ»ին վրայ ոչ մէկ հարց կ'ուզենք, եւ նախարար Փաուլը հասկացողութեամբ ընդունեց մեր այս կեցուածքը, ըսաւ նախագահ Լահուտ:

«Մագարէ՛՛ Շրջապալի լիբանանեան հող է եւ այդպէս պիտի մնայ: մենք կ'ուզենք անոր վերատիրանալ եւ յոյս ունինք, որ կուտելու չենք ստիպուիլ ատոր համար», ըսաւ ան:

«Կրցա՞ք սանձել շրջապալայի գրգռիչ արարքները», հարցումին պատասխանելով՝ նախագահ Լահուտ ըսաւ, որ առանց շրջապալայի լիբանանեան տարածքի մէջ մասը բռնագրաւուած պիտի մնար, «եւ մեր հողին վերատիրացանք շնորհիւ անոր մղած պայքարին, իսկ այսօր շրջապալայ կը գործէ միայն Մագարէ՛՛»:

ցուցիլ ենք որ ճամբով հարթել հարցերը, որպէսզի շրջանէն ներս ընդհանուր խաղաղութիւն հաստատուի», աւելցուց ան: Նախագահ Լահուտ յիշեցուց, որ Լիբանանի դառն փորձառութիւն ունեցած է Շարունի հետ: «Միացեալ Նահանգներ անհրաժեշտ չափով ճնշում չեն բանեցներ իսրայէլի վրայ, վերջ ղեն լու պաղեստինցիներուն ղէմ անոր վայրագութիւններուն, բայց ան-

Շար.՝ էջ 10

ՀԱԿԱՌԱԿ ԱՆՈՐ ՈՐ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ԴԷՄ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԼԱՅՆԱԾԻՐ ԱՐՇԱԼԸ ԱԲԱՐՏԱԾ Է

ՇԱՐՈՆ ԳՐԱԻՄԱՆ ՏԱԿ ԿԸ ՊԱՇԷ ԱՐԱՖԱԹՆ ՈՒ ԲԵԹՂԵՄԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն երէկ յայտարարեց, որ աւարտած է Այսրոյրդանանի ղէմ գինուորական յայտարարութիւնը, որ սկսած էր Մարտ 29ին: Շարոնի յայտարարութիւնը չըսաւ, սակայն, թէ իսրայէլեան ուժերը ինչո՞ւ տակաւին Ռամալլայի կեդրոնատեղիին մէջ բանտարկուած կը պահեն պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատը, կամ թէ ինչպէս պիտի լուծուի Բեթղեմի մի պաշարուած եկեղեցիին հարցը: Շարոն ըսաւ, որ գործողութեան այս փուլը աւարտած է, եւ թէ իսրայէլ գոհացուցիչ արդիւնք նուաճած է:

Իսրայէլեան բանակին զինուորներն ու հրասայլերը երէկ պարպեցին Այսրոյրդանանի երկու մեծ քաղաքներ, ուր երեք շաբաթ առաջ ներխուժած էին: Բանակը յայտնեց, որ հեռացած է Ռամալլայէն պաշարման օդակի մը մէջ պահելով միայն Արաֆատի կեդրոնատեղին, ուր ըստ բանակին՝ ապաստանած են «ահաբեկիչներ»: Բանակը



Պաղեստինցիներ՝ Ժենիհի փլատակներու մէջ հարազատներ կը փնտռեն:

աւելցուց, որ գրեթէ ամբողջացուցած է նաեւ Նապլուսի պարպումը: Ձինուորական աղբիւր մը հաղորդեց, որ Նապլուսի մէկ բաժինը տակաւին բանակին հակադիմադրական տակ կը մնայ, որովհետեւ տասնեակ մը հրեաներ այցելած են Յոփսէփի գերեզմանը եւ տակաւին դուրս չեն եկած: Բանա-

կը նախ զանոնք դուրս պիտի հանէ, ապա՝ պիտի մտնուի պարպումը: Իսրայէլեան ռազմական շարժումները շարունակուած են, որ ուղղափառ հրեաներ առանց արտօնութեան մտած են սրբավայրը: Պաղեստինեան ապահովութեան հարցերու բարձրաստիճան պաշտօ-

նատար Մոհամէտ Տահլան յայտնեց, որ իսրայէլեան բանակին հեռացումը մեծ նշանակութիւն չունի, որովհետեւ այնքան ատեն, որ բանակը տակաւին ներկայ է պաղեստինեան շրջաններուն մէջ, Իսրայէլ չի կրնար յայտարարել, թէ

Շար.՝ էջ 10

«ՆԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՅԿԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՐԵՎԵՆՈՒ ՎԱՍՏԱՐ» ԱՆԳԱՐԱ ՈՐՈՇԱԾ Է ԱԿԱԳԵՄԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՐՏՕՆԵԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՕՍՄԱՆԵԱՆ ԱՐԽԻՒՆԵՐԸ

Ստորեւ տրուած լրատուութիւնը կը պատկանի «Ռոյթթեր»-ի: Թուրքիոյ նախագահ Ահմէթ Նեքտէթ Սեզէր որոշած է թրքական պետական արխիւները բանալ ակադեմիականներու առջեւ: «Ջրեւու համար Հայկական Յեղասպանութեան մասին հայկական պնդումները»:

Թուրքիոյ այս որոշումին ծախքերուն տակաւին կ'անդրադառնանք այս առիթով միայն հարց կու տանք: Անգարա ինչո՞ւ սպասեց ամբողջ 87 տարի «այդ արխիւները» ակադեմիականներու դիմաց բանալու համար, եթէ իսկապէս անոնք պիտի կարենան ժխտել Հայկական Յեղասպանութիւնը:

Թուրքիա Շարաօ օր յայտարարեց, թէ պիտի արտօնէ ակադեմիականներու ուսումնասիրել արխիւներ, որոնք, ըստ Թուրքիոյ, պիտի հերքեն անցեալ դարակիպին օսմանցի թուրքերու կողմէ հայերու ղէմ կատարուած ցեղասպանութեան մասին հայկական պնդումները:

Թուրքիա ցարդ շատ սահմանափակ առիթ տուած է այդ օրերու արխիւներուն մէջ պրպտումներու: «Մեր արխիւները այս նպատակով բաց են գիտական ուսումնասիրութեան համար», ըսաւ Թուրքիոյ նախագահ Ահմէթ Նեքտէթ Սեզէր: Անգարայի Անգարայի կոչուած Յեղասպանութիւնը, որուն ընթացքին՝ 1915էն 1923, ըստ անոնց՝ Օսմանեան Թուրքիոյ մէջ զոհ գացած են 1.5 միլիոն հայեր: Եւրոպական պետութիւններ եւ խորհրդարանականներ իրաւիքուած են մասնակցելու ոգեկոչումներուն:

Թուրքիա կ'ըսէ, թէ դէպքը երբեք պատահած չէ, այլ կոհեր եղած են երկու կողմէն, Օսմանեան կայսրութեան փլուզումին ընթացքին ծագած կոհերուն ընթացքին: Անգարայի երկօրեայ խորհրդաժողովին

Թուրքիա կ'ըսէ, թէ դէպքը երբեք պատահած չէ, այլ կոհեր եղած են երկու կողմէն, Օսմանեան կայսրութեան փլուզումին ընթացքին ծագած կոհերուն ընթացքին: Անգարայի երկօրեայ խորհրդաժողովին

Շար.՝ էջ 10

ՃՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐԱՔ ԵՒ ԼՐ ՓՔՆ ԱՆՑԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԶԱՆԳՐՈՒԱՆ



Շիրաք ԼՐ ՓՔՆ

Ցրանսայի նախագահական ընտրութիւններուն երէկ նախագահ Ժաք Շիրաք, ըստ նախնական արդիւնքներուն, շահած է ջուհներուն 20 առ հարիւրը, ծայրայեղ աջ ժան-Մարի Լը Փէն՝ 17,9 առ հարիւրը: Իսկ վարչապետ Լիոնէլ Ժոսփէն ստացած է ջուհներուն 16,1 առ հարիւրը:

Երկրորդ հանգրուանին, որ պիտի կայանայ 5 Մայիսին, Շիրաք եւ Լը Փէն կ'ըլլան երկու թեկնածուներ:

Գլխաւոր թեկնածուներուն՝ ներկայ նախագահ Ժաք Շիրաքի եւ վարչապետ Լիոնէլ Ժոսփէնի հանդէպ ժողովուրդին յուսախաբութեան պատճառով ջուհարկողներուն թիւը մը քանիչ կոտորող ցած համեմատութիւն մը արձանագրած է:

Հակառակ երկրին գրեթէ ամբողջ տարածքին տիրող պայծառ օդին, ջուհարկողներու համեմատութիւնը հազիւ 30 առ հարիւր արձանագրած է:

Շար.՝ էջ 10

ՄԱՀԱՁԴ

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն կը գուժէ ազգային, կուսակցական եւ մշակութային գործիչ, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի նախկին ներկայացուցիչ

ՏՈՔԹ. ԵՐԿ ԳՈՆԵԱԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շարաօ, 20 Ապրիլ 2002ին, Լոս Անճելէսի մէջ:

ՄԱՀԱՁԴ

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան համայն ընտանիքը կը գուժէ իր հաւատարմութեամբ եւ վաստակաւոր ընկերներէն՝ իր Կեդրոնական Վարչութեան Երկարամեայ ատենակցի եւ հասարակական գործիչ

ՏՈՔԹ. ԵՐԿ ԳՈՆԵԱԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շարաօ, 20 Ապրիլ 2002ին, Լոս Անճելէսի մէջ:

ՀԱՄԱԳԱՅԻՆ ԿԵՂԵՐՈՒՄԻ ԿԱՐՁՈՒԹԻՒՆ

ԵՂԵՌՆԻ 87ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Կազմակերպութեամբ՝

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 23 Ապրիլ 2002ի երեկոյեան ժամը 9:00ին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի Եղեռնի մատրան դիմաց:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ Փ. ԵՒ Է. ԹՈՐՈՆՍԵԱՆ ԿԱՐԺԱՐԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ



Ուրբաթ, 19 Ապրիլի երեկոյան ժամը 8:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահը լեցուած էր Հայ Աւետարանական Թորոնսեան վարժարանի ծնողներով եւ բարեկամներով, որոնք եկած էին ըմբռնութեամբ զպրօքի նորափթիխ տղոց եւ աղջիկներուն տաղանդները, որոնք ներկայացուցան երգերու, պարերու, արտասանութեան, գրոյցներու եւ թատերական փոքր ներկայացումներու ճամբով:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութեան հետք Ռաֆֆի եւ Մանուկ Ջիւրիկի իրենց ներկայացումը իւրապարտօրէն ձեռնով ներկայացուցին գեղարուեստական երեկոյն եւ անոր ընթացքին գործադրուած յայտագիրները:

Անոնք նաեւ երկխօսութեան ճամբով անդրադարձան դպրոցին մէջ իրենց ապրած օրերուն եւ յիշողութեան պատուով ընդմէջ ներկայացուցին դպրոցին մէջ եղած փոփոխութիւններն ու նորութիւնները: Անոնք անդրադարձան այն բարգաւաճման եւ զարգացման, որ կատարուած է դպրոցին մէջ:

Ձեռնարկին առաջին բաժինով Հանդէս եկաւ վարժարանի մանկապարտէզի երգչախումբը, որ իր նուագարաններով Հնչեցուց մանկական երաժշտութիւնը եւ անոր ընկերացաւ իր բարակ, սակայն զօրաւոր ձայնով: Խուճար՝ խմբավար Գայիանէ Մարկոսեան - Յարութիւնեանի ղեկավարութեամբ, մեկնաբանեց Հինգ երգեր՝ «Ամեցազօր Աստուած»ը, «Նոյեան Տապան»ը, «Իմ Մայրիկ»ը, «Իմ Լեզուս» եւ «Ձան Գարուն»ը: 37 փոքրիկներ, առանց շուտիւ, իրենց ուսուցչուհիին ցուցումներով ներկայացան զբացան գրաւել ներկաներուն ուշադրութիւնը՝ զանոնք ալ մօտ կէս ժամ փոխադրելով իրենց անմեղ ու պարզ աշխարհը:

Երգող փոքրիկներէն ետք բեմ բարձրացան պարողները, որոնք ճկուն եւ աշխուժ ձեռով ներկայացուցին «Երեւանեան» պարը:

Վարժարանին մեծերու երգչախումբը յաջողեց փոքրերու ներկայացումներուն: Վեր. Ներսէս Պալապանեանի խմբավարութեամբ, երգչախումբը հայաշունչ ոգիով մեկնաբանեց Յ. Շիրազի «Ղարաբաղին»ը, իսկ Սելա Քէլէշեան մեներգը Ս. Կապուտիկեանի «Հայոց Աշխարհ»ը: Ապա իւրեւրը անգլերէն լեզուով եւ իւրապարտօրէն ձեռով ներկայացուց քանի մը երգեր. ապա «Այսպիսի երգ», «Հայաստան» երգերը, վերջինը մեկնաբանեց Յովսէփ Այնթապեան, ինչպէս նաեւ արարեցին լեզուով «Այլ չըրրի»ն, որուն մեներգողներն են՝ Սարին Քէլէշեան եւ Յոյեր Սուրէնեան: 28 աշակերտներէ բաղկացած այս երգչախումբը ունէր երգերը մեկնաբանելու իւրապարտօրէն ոճ, նոր ձեւեր եւ իր երգչոգութեան ընթացքին ուրախութեան ու զոհուածութեան զգացում մը կը յառաջանէր ներկաներուն մօտ:

Վանա Մովսէսեան, Սելա Քէլէշեան եւ Շանթ Պապուկեան արտասանեցին Յ. Թումանեանի բանաստեղծներէն: Ասմունքած ատեն անոնց շնորհ հաստատ էր, վճռակամ եւ ինքնավստահ:

Մեծերու պարախումբը ներկայացուց «Հոյ մազան» եւ «Հայաստանի ծով գիւղի» պարերը:

Նշենք, թէ պարերը բեմականացուած էին դպրոցի պարուստյց Յարութ Գարսեանի կողմէ: Երեկոյին գեղարուեստական բաժինին վերջին մասը բեմական ներկայացում մըն էր: Թատերախաղին ընթացքին, որ բեմադրուած էր Ռուպէրթ Առաքելեանի կողմէ, աշակերտները ներկայացուցին լիբանանահայ կեանքին մէջ տարածուած օտարաժողութեան երեւոյթը, Հայ աշակերտներու օտար վարժարան երեւոյթը, Հայ աշակերտներու օտար վարժարան ղրկելու պարագան: Այս ներկայացումով փոքրիկները իրենց զարմանքը յայտնեցին Հայ աշակերտները օտար դպրոց յաճախելու երեւոյթին եւ իրենք շնչտեցին Հայ դպրոցին անհրաժեշտութիւնը:

Պարզ թատերախաղ մըն էր, որ սակայն կարեւոր պատգամ մըն էր, փոքրերուն բերնէն բոլոր օտարաժողութեան ճամբուն մէջ եղողներուն:

Ապա խօսք առաւ վարժարանի տնօրէնուհի Սեդա Գարակէօզեան, որ շնորհակալութիւն յայտնեց ուսուցիչներուն, աշակերտներուն, ծնողներուն եւ բոլոր անոնց, որոնք օժանդակած են ձեռնարկի յաջողութեան: Ան նշեց, թէ կեանքի մէջ ընդհանրապէս բարձունք նուաճելը դիւրին չէ, չունի կտրուկ ճամբայ, այլ անոր հասնելու համար պէտք է ժրջան աշխատանք տարուի: Ան աւելցուց, թէ դպրոցին մէջ նուաճումներ եւ յաջողութիւններ արձանագրելու համար, զանազան անձեր եւ կազմակերպութիւններ օժանդակած են նիւթապէս եւ բարոյապէս անոնց կարգին ան յատկապէս նշեց Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը, որուն պատասխանատուներէն վեր. Ժիրայր Սողոմեանը, որ Լիբանան կը գտնուի, հրաւիրեց բեմ: Վեր. Ժիրայր Սողոմեան իր գոհունակութեան եւ ուրախութեան զգացումները արտայայտեց եւ ըսաւ, թէ բեմին վրայ գտնուող պատկերները կը հանդիսանան ապագայի յոյսը:

Հանդիսութիւնը փակուեցաւ վեր. Սկրտիչ Գարակէօզեանի արթթբով:

Այս հանդիսութիւնը առիթ տուած էր բոլոր տարիքի աշակերտներուն իրենց տաղանդները ներկայացնելու եւ քաջալերելու զանոնք:

ՕՍԿԱՆԵԱՆ - ՇԱՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան 17 Ապրիլին հանդիպում ունեցած է «Էլ-Չարգացու»-մը Կոփկասի համարձակ շրջանային համաժողովին մասնակցելու նպատակով Երեւանի մէջ գտնուող իրանի կապի փոխ նախարար Մասուտ Շաֆիի գլխաւորած պատուիրակութեան հետ:

Հանդիպման ընթացքին երկու կողմերը գոհունակութիւն յայտնած են:

«Էլ-Չարգացու» կողմից համարձակ շրջանային խորհրդատուական արդիւնքներէն, ինչպէս նաեւ ընդգծուած է կարելիութիւններու այն լայն շրջանակը, որ այս համաժողովը պիտի ընձեռն շրջանային համագործակցութեան ընդլայնման առումով:

Վ. Օսկանեան կարեւոր նկատած է տեղեկատուական արհեստագիտութեան զարգացման մարզին մէջ իրանական կողմին աշխուժ մասնակցութիւնը՝ առաջարկելով սերտ համագործակցութիւն նշեալ մարզին մէջ:

ԽԱԶԱՏՐԵԱՆ - ԵՍԱՅԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան 17 Ապրիլին աշխատանքային հանդիպում մը ունեցած է Լեւոնային Ղարաբաղի Ազգային Ժողովի նախագահ Օլէկ Եսայեանի հետ: Անոնք քննարկած են միջխորհրդարանական համագործակցութեան հարցեր:

Անոնք նաեւ ընդգծած են, որ վերջին մէկ տարեան ընթացքին աշխուժացած են երկու խորհրդարաններուն միջեւ կապերը: Կարեւոր նկատելով երկու խորհրդարաններուն սերտ համագործակցութիւնը՝ Օլէկ Եսայեան առաջարկած է մնայուն ներկայացուցիչ ունենալ Հայաստանի Ազգային Ժողովին մէջ: Հանդիպման ընթացքին քննարկուած են նաեւ այլ հարցեր:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՆ՝ ՀԱՅԵՐՈՒ ՆՊԱՏԱԿԱԿԷՏ

Գաղթականութեան Միջազգային Կազմակերպութեան մէջ ուսումնասիրութեան պարագուծ է, որ 2000 - 2001 թ ու կ ա ն ն եր ու ն Արեւմտեան Եւրոպան եղած է ապաստան փնտրող հայերու հիմնական նպատակակէտը, կարեւոր տեղ գրաւած են նաեւ Լեհաստանը, Չեխիան եւ Միացեալ Նահանգները:

Միայն 2001 թուականին Արեւմտեան Եւրոպա մեկնած է 3026 մարդ: Գերմանիա ապաստանի համար դիմած է 558 հոգի, Պելճիքա՝ 654, Հոլանտա՝ 401: Վերջին տարիներուն Հոլանտա մուտք գործած Հայ դիմորդներուն 15 առ հարիւրին կա՞մ ապաստան, կա՞մ մարդկայական կարգավիճակ տրուած է:

Կը նշուի, որ ըստ ուսումնասիրութեան, 2000 թուականին Հայաստանէն Արեւմտեան Եւրոպա մեկնողներուն ապաստանի դիմումներու նախական թիւը կազմած է 6590:

«ԼԻՆՍԻ» ԴԻՍԿՈԳՐԱՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներկայիս «Լինսի» Հիմնադրամին հետ կը քննարկուի Հայաստանի մշակույթի օճախներու վերանորոգման երկրորդ փուլը սկսելու ծրագիրը:

Հայաստանի մշակույթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Ռոնալտ Շառոյեան 18 Ապրիլին լրագրողներու հետ զրոյցի մը ընթացքին նշեց, որ առաջին փուլին այդ նպատակով հիմնադրամը յատկացուցած էր 10 միլիոն տոլար: Այս փուլին վերանորոգուած մշակույթի օճախներուն բացումը պիտի կատարուի Մայիսի վերջաւորութեան եւ Յունիսի սկիզբը:

Ըստ նախարարին, հիմնադրամի Ֆինանսաւորման համար ներկայացուած են Հայկական Ցեղասպանութեան հիմնարկ - Թանգարանին, Խաչատուր Աբովեանի տուն - Թանգարանին, Վանաձորի մշակույթի պալատին եւ այլ մշակութային օճախներու վերանորոգման աշխատանքները:

ՄԽԻԹԱՐ ԳՕՇԻ ՇՔԱՆՇԱՆ՝ Վ. ՉԵՌՆՈՄԻՐՏԻՆԻ

16 Ապրիլին Ուերանիոյ մէջ Հայաստանի դեսպան Հրաչեայ Միլիանեան Միխիթար Գօշի շքանշան յանձնած է Ուերանիոյ մէջ Ռուսիոյ դեսպան Վ. Չեռնոմիրտինի:

Վերջինս այդ պարգևին արժանացած է Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեանի 4 Դեկտեմբեր 1998 թուակիր հրամանագրով՝ 1988ի երկրաշարժին ընթացքին Հայաստանին ցուցարբած մեծ օգնութեան համար:

Պարգեւատրման արարողութեան ներկայ գտնուած են Ուերանիոյ մէջ հաւատարմագրուած օտար եւ ԱՊՀի երկիրներու դեսպաններ, ինչպէս նաեւ՝ լրատուական միջոցներու ներկայացուցիչներ:

ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՍԻ. ՏԻ. ՆԵՐԸ

Վերջերս յոյս տեսած է խոսաստիկներու (Սի. Տի.) ալպոմ մը, որ կը բովանդակէ Բարսեղ Կանաչեանի ստեղծագործութիւնները:

Խոսաստիկներէն առաջինին մէջ կան մեծ երգահանին հեղինակած 7 մեներգները, երկրորդին մէջ 23 խմբերգ (պրոլաճ՝ երգչախումբի երկսես կազմի համար), իսկ երրորդին մէջ՝ 18 մանկական խմբերգներ:

Բարսեղ Կանաչեանի ստեղծագործութիւնները կը կատարեն երգչուհիներ՝ Աննա Մայիլեան, Յասմիկ Հացագործեան եւ Հայաստանի Ազգային Ռատիոյի «Հայ երգ»ի եւ «Հայաստանի Փոքրիկ երգիչներ» երգչախումբը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐԻԿ ԵՐԳԻՉՆԵՐ»Ը՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐՈՒ ՖԵՏԵՐԱՍՊՈՆԻ ԱՆԴԱՄ

Եւրոպական Միութեան երգչախումբերու Ֆետերասիոնի որոշումով, «Հայաստանի Փոքրիկ երգիչներ» մանկապատանեկան երգչախումբը (գեղարուեստական ղեկավար՝ Տիգրան Հեքեքեան) դարձած է այդ կազմակերպութեան անդամ:

Այս ֆետերասիոնը ստեղծուած է աշխարհի բոլոր մասերէ երգչախումբերու ղեկավարներուն ջանքերով եւ կը նպատակադրէ համախմբել յատկապէս լաւագոյն երգչախումբերը:

Ֆետերասիոնը իր կազմին մէջ գտնուող լաւագոյն երգչախումբերուն երեք տարուան համար կը շնորհէ «Մշակույթի դեսպան» տիտղոսը: Ըստ Տ. Հեքեքեանի, այս տարի «Հայաստանի Փոքրիկ երգիչներ»ը աշխարհի շարք մը երգչախումբերուն հետ արժանացած է այդ կոչման:

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԸ ՊԻՏԻ ՆՇԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայկական Ցեղասպանութեան 87ամեակին առիթով Ռուսիոյ Հայերու Միութիւնը 24 Ապրիլին Մոսկուայի մէջ պիտի կազմակերպէ շարք մը ձեռնարկներ: Այս տարի յիշատակի նշումը տեղի պիտի ունենայ Մոսկուայի Բրիտանոս Փրկիչ տաճարի կողքին տեղադրուած խաչքարին մօտ:

Նոր Նախիջեանի Ռուսիոյ թեմի առաջնորդ Եգրաս եպս. Ներսիսեան պիտի կատարէ յիշատակումի ժամերգութիւն, որմէ ետք տեղի պիտի ունենայ խաչքարին ծաղկեպսակներ եւ ծաղիկներ գետեղելու արարողութիւն:

Անոր պիտի յաջորդէ բողոքի հանրահաւաք, որ տեղի պիտի ունենայ Ռուսիոյ մէջ Թուրքիոյ դեսպանատան առջեւ:

www.hamazkayin.com

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԱՍԻՆ

«Հազուադէպօրէն կը պատահի, որ ժողովուրդ մը իր երկրէն ուրիշ երկիր մը գաղթէ եւ օժանդակէ վերջինիս բարգաւաճման՝ առանց հարցեր ու խոսովութիւններ յառաջանելու, յատկապէս եթէ այդ երկրին բնակչութիւնը կազմուած ըլլայ փոքրամասնութիւններէ: Հայ ժողովուրդը, որ աքսորի ու ջարդի ենթարկուած է, լիբանանեան կեանքին մէջ կը հանդիսանայ այս պարագայի իւրապարտօրէն օրինակը»:

Լիբանանեան «Ժիլ» ամսաթերթը այս հաստատումով կը սկսի իր Ապրիլ ամսուան թիւին լիբանանահայութեան յատկացուցած բաժինը: Ամսաթերթին 14 էջերու վրայ Նարա Ուաքիմ մանրամասն ձեւով կը ծանօթացնէ լիբանանահայութիւնը՝ սկսելով անոր ծագումէն մինչեւ ներկայ ժամանակները:

Յօդուածագիրը ամփոփ ձեւով կը ներկայացնէ հայ ժողովուրդին պատմութիւնը, ապա կը հասնի Հայկական Ցեղասպանութեան՝ նկարագրելով հայ ժողովուրդին կոտորածն ու ջարդը. հոս ան մանրամասն կը ներկայացնէ Արեւմտահայաստանի գաղթական շրջանները, ուրկէ տեղահանուեցաւ հայ ժողովուրդը եւ բոնեց գաղթի ճամբան: Ամփոփ ձեւով կը խօսի նաեւ Մեծ եղեռնէն առջեւ հայ ժողովուրդի կեանքին եւ քրքրական իշխանութեան շրջանին անոր ունեցած դժուարութիւններուն մասին: Ապա կ'անդրադառնայ հայութեան Լիբանան հասնելուն, հոն հաստատուելուն եւ հետեզհետէ բարգաւաճման: Ընդհանուր արժեքներով մը կատարելով՝ յօդուածագիրը կը հաստատէ, թէ հայութիւնը իր անժխտելի դերակատարութիւնը ունեցած է Լիբանանի մէջ: Կը նշէ, թէ հայութիւնը օճանդակած է Լիբանանի գաղթական բնագաւառներու զարգացման եւ բարգաւաճման, տուած է գործիչներ եւ ակահաւոր դեմքեր թէ՛ արուեստի եւ թէ՛ արհեստի մարզերուն մէջ: Յօդուածին մէջ կը նշուի այն արուեստագետներուն անունները, որոնք իրենց անցեցելի դրոշմը դրած են Լիբանանի մշակութային եւ ընդհանրապէս արաբական աշխարհի կեանքին վրայ: Յիշած է այն արաբ դերասաններուն անունները, որոնք ծագումով հայ են: Յօդուածագիրը նաեւ կ'անդրադառնայ լիբանանեան պատերազմին ընթացքին հայութեան որդեգրած կեցուածքին եւ անոր պատճառով լիբանանահայութեան դիմագրաւած դժուարութիւններուն: Կը յիշէ նաեւ երեք կուսակցութիւնները, Լիբանանի եւ արաբական երկիրներուն մէջ գործող կազմակերպութիւնները եւ միութիւնները:

«Տիար» օրաթերթը, իր կարգին, Մարտ ամսուան ընթացքին յոյս բնծայած է հայ ժողովուրդին եւ անոր իրաւունքներուն նուիրուած յօդուածի մը՝ Սօսի Սարգիսեանի ստորագրութեամբ: Ան կը ներկայացնէ մարդ արարածին իրաւունքները եւ անկէ մեկնելով հայ ժողովուրդին պարագան, որուն բոլոր իրաւունքները ունեւարած են 1915 թուականին:

Երբ ան զուրպ դրուելով իր հայրենիքէ՝ Ենթարկուած է անհաւոր կոտորածի եւ ցեղասպանութեան:

«Սաֆիր» օրաթերթին մէջ եւս Յովհաննէս Թաւազեանի ստորագրութեամբ, յոյս տեսած է Հայ Դատին առնչուող յօդուած մը, որ նաեւ կը միտի հանրութեան ուշադրութիւնը հրաւիրել Հայկական Ցեղասպանութեան վրայ: Ան կը ներկայացնէ 1915էն ետք աշխարհին մէջ պատահած յատկանշական դեպքերուն եւ հայ ժողովուրդի դատին եւ պահանջատիրութեան մէջ անոնց ունեցած ուղղակի եւ անուղղակի դերակատարութեան: Յօդուածագիրը փաստացի տուեալներով կ'անդրադառնայ ժամանակի ընթացքին մեծ պետութիւններու կեցուածքներու փոփոխութեան, անոր պատճառներուն եւ Հայ Դատին վրայ անոնց ունեցած ազդեցութեան:

2. Յ. Դաշնակցութեան Տեղեկատուական Գրասենյակի աշխատակցով իրագործուած այս հրապարակային արձագանգները կը միտին հայութիւնը ու Հայ Դատը ծանօթացնել հանրութեան եւ յաւելել տեղեկութիւններ ու տուեալներ փոխանցել անոր: Թեւեւ հայր անցնուած է Լիբանանի մէջ, սակայն անոր պատմութիւնը, գործուեցողութիւնը եւ Հայ Դատն ու անոր մանրամասնութիւնները կրնան ծանօթ չըլլալ անոր, եւ ինք սխալ կամ ոչ ամբողջական տեղեկութիւններ կազմած կրնայ ըլլալ անոնց մասին: Այդ մտահոգութեան մեկնելով՝ 2. Յ. Դ. Տեղեկատուական Գրասենյակը կը միտի հաւանտի եւ փաստացի տուեալներով ներկայացնել լիբանանահայութիւնը ու անոր հետապնդած սրբազան դատը:

Ն. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

«ՁԲՕՍԱՇՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՏԱՔՍԻ ՄԵՇ ԴԱՆԱՊԱՐՀԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

18 Ապրիլին Թիֆլիսի «Էքսփո ձորնիս» ցուցահանդէսներու կեդրոնին մէջ բացուած է «Ձբօսաշրջութիւնը եւ մետաքսի մեծ ճամբան» միջազգային չորրորդ ցուցահանդէսը:

Ցուցահանդէսին ներկայացուած են իտալիոյ, Հայաստանի, Աւստրիոյ, Արգենթինայի, Թուրքիոյ, Յունաստանի, Ռուսիոյ, Ռուսիոյ, Սպանիոյ, Ուրուգուայի, Ուզբէքիստանի եւ այլ երկիրներու մօտ 60 կազմակերպութիւններ:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶՁԱՅԻՆ ԹԻՒԽԵՐԸ

«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ԼԻՊԱՐԻՏԵԱՆԻ ԽԵԼՔՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԵԼՈՒ ԽԻՍՏ ԿԱՐԻՔԻ ՄԵՋ Է»

Վերջին շրջանում տեղի են ունենում այնպիսի քաղաքական գարգացումներ, որոնք կամայ թէ՛ ակամայ անդրադառնում են թուրքիայի հետ Հայաստանի յարաբերությունների վրայ: Վրաստանում Միացեալ Նահանգների ռազմական ներկայութեան աշխուժացման այս փուլում եթէ Հայաստանի տեսանկյունից կարեւոր նշանակություն ունենալիք ներկայությունը հայկական իշխանությունների մտեցումը, ապա Միացեալ Նահանգների առումով մեծ կարեւորություն է ձեռք բերում հայ-թուրքական յարաբերությունների կարգաւորումը, իսկ թուրքիան կարգաւորման ամերիկեան նախաձեռնություններն ամէն կերպ փորձում է ծառայեցնել իր ազգային շահերին:

Այդ գարգացումներից կարելի է առանձնացնել սփիւռքահայ եւ թուրք գիտնականների մասնակցութեամբ Մարտի 7-10ը Միչիկընի համալսարանում կազմակերպուած գիտաժողովը, «Հայ-թուրքական Հայտեցման Յանձնաժողովի» վերականգնման մասին գիտաժողովի որոշումը, յանձնաժողովի մասնակիցների Ապրիլի 1-2ին նախատեսուած նիւերոքեան հանդիպման հետ Լեւոն Տէր Պետրոսեանի պոսթընեան այցելութեան յետաձգումը, մասնակիցներից Վան Գրիգորեանի եւ Անդրանիկ Միհրանեանի Հայաստան ժամանումը, Տէր Պետրոսեանի հանդիպումը վերջինի հետ, նրա հնարաւոր վերադարձը քաղաքականութիւն, վերադարձին նպաստելու թուրք-ամերիկեան պատրաստակամութիւնը եւ Պաքուում դրա ողջուցումը:

«Ակոս»ը Մարտի 29ի համարում քաղաքական վերոյիշեալ գարգացումները բնութագրելով իրրեւ անակնկալ, դրանց ընթացքը պայմանաւորում է Հայաստանում առաջիկայ նախագահական ընտրութեան ներքին եւ արտաքին ստեղծուած այն մթնոլորտով, որը իւրաքայուն է նախընտրական տարիներին: Հարցը, սակայն, սոսկ այդ գարգացումների նախագահական ընտրութիւններով պայմանաւորուած չէ, այլ՝ Տէր Պետրոսեանի քաղաքականութիւն վերադառնալու խրախուսումը: «Ակոս»ը, սակայն, դրանով չի սահմանափակուած: Տէր Պետրոսեանին խրախուսելու միաժամանակ խրախուսում է նաեւ Ժիրայր Լիպարիտեանին, որպէսզի նա էլ քաղաքականութիւն վերադառնայ:

Յատկանշական է, որ Տէր Պետրոսեանի եւ Լիպարիտեանի վերադարձն արժանութեամբ է Միչիկընի գիտաժողովի աշխատանքներին նուիրուած յօդուածում: Յիշեցման կարգով նշենք, որ գիտաժողովը դեռիսկ էր, դրա աշխատանքներին իրրեւ լրագրող մասնակցում էին «Ակոս»ի գլխաւոր խմբագիր Հրանդ Տինքը եւ «Թիւրք-իսլամ» զործակալութեան թղթակից ձեռնարկը Չանտարը, որոնք էլ լիագործուած էին լուսարանելու աշխատանքները:

Գիտաժողովի աշխատանքները լուսարանելու թեբեւ լաւագոյն ձեւը գեկուցումներ հրապարակումն է: Թէեւ Պաքու Օրանը իրրեւ գիտաժողովի մասնակից տեղեկացրել էր, որ դրանք կը հրապարակուեն «Ակոս»ի էջերում, այնուամենայնիւ, Հրանդ Տինքն առայժմ հրապարակում է իր տպաւորութիւնները: Այս պայմաններում մենք առանց գեկուցումների բովանդակութեան ծանօթանալու, ծանօթանում ենք դրանց գնահատականներին: Օրանն իր գնահատականներում Լիպարիտեանի գեկուցումը գիտաժողովի գեկուցումների մէջ կարեւորագոյնն է համարել, Հրանդ Տինքը զմեռութեամբ էր որպէս պատմական, իսկ Ռոնալտ Միլին գեկուցումից կատարել էր հետեւեալ մէջբերումը: «Ամէն ինչ չէ, որ գիտենք: Այդ իսկ պատճառով ընդհանուր յայտարարի չենք գալիս: Սա առողջ մտեցում է»:

Ամէն ինչ չիմանալը վերաբերում է 1915 թուականի իրադարձութիւններին: Ընդհանուր յայտարարի չեն գալիս, որպէսզի այդ իրադարձութիւնները յանկարծ ցեղասպանութիւն չորակուեն: Այլ կերպ՝ Լիպարիտեանը Միչիկընի գիտաժողովում իր գեկուցումով ակնյայտորէն խեղաթիւրել է Հայոց Յեղասպանութեան պատմական իրողութիւնը: Ինչէ՞: Որպէսզի Օրանը նրա գեկուցումն առանձնացնի միւսներից եւ դրանց մէջ կարեւորագոյնը համարի, իսկ Տինքը՝ պատմական:

Ըստ երեւոյթի, ոչ պակաս պատմական է եղել Օրանի՝ իր տիկնոջ հետ, Չանտարի եւ Տինքի հիւրընկալումը Լիպարիտեանների բնակարանում: Դրանում համոզուելու համար կարելի է անդրադառնալ «Ակոս»ի Մարտի 29ի համարին, որտեղ Տինքը գրում է. «Իմացանք, որ Լիպարիտեանը մի քանի ամիս առաջ ստի վիրահատութիւն է ունեցել: Ներկայումս նրա առողջական վիճակն անհամեմատ լաւ է: Պէտք է որ լաւ լինի, որովհետեւ հայոց աշխարհը նրա խելքով առաջնորդուելու խիստ կարիքի մէջ է: Ինչպէս յայտնի է, Լիպարիտեանը Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի գլխաւոր խորհրդականն էր, եւ, ինձ թուում է, նրանք երկուսով քաղաքական ասպարէզի ամենաաշխուժ դերակատարութեան գլխաւոր թեկնածուներն են: Մասնաւորապէս Լեւոն Տէր Պետրոսեանի օրերս նախատեսուող գիտական այցի շրջանակները Միացեալ Նահանգներում ամենեւին էլ չի թուում, թէ՛ կը սահմանափակուի սոսկ համալսարանի շրջանակով: Այցը միանգամայն կարելի է վերադարձի առաջին նշանակալից քայլը համարել: Գիտաժողովի վերջին օրը Լիպարիտեանների ընտանիքը մեզ հիւրասիրեց, այդ ընթացքում մենք հնարաւոր քաղաքական գարգացումների մասին երկար գրուցելու հնարաւորութիւն ստացանք: Ինձ թուում է, Տէր Պետրոսեանի վերադարձի հաստեացման ժամկէտը լրանում է: Օգոստոսին Լիպարիտեանը Պոլսում է լինելու, կարծում եմ, մինչ այդ ամէն ինչ հետզհետէ աւելի յստակ է դառնալու»:

Տինքի այս խօսքերը մեկնաբանութեան կարիք չեն զգում: Դրանք պարզապէս հաստատում են այն հաշուարկների առկայութիւնը, որոնք Տէր Պետրոսեանի քաղաքականութիւն վերադարձի վրայ են արւում եւ երեւան են հանում վերոյիշեալ քաղաքական գարգացումների առնչութիւնն այդ հաշուարկներին, ինչպէս նաեւ դրանց փոխկապակցուածութիւնը:

ՅԱՎՈՐ ԶԱՔՐԵԱՆ

«Ա.Գ.Գ»

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՓՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան 16 Ապրիլին հանդիպում մը ունեցած է Վրաստանի արտաքին գործոց փոխ նախարար Թամար Պեռուչանիլիի հետ, որ կը գլխաւորէ Երեւանի մէջ ընթացող տեղեկատուական արհեստագիտութեան խորհրդաժողովին Վրաստանի պատուիրակութիւնը:

Հանդիպման ընթացքին քննարկուած են եւրոպական ուղղութեամբ տարուող երկու երկիրներուն ջանքերը, Եւրոպական Միութեան հետ գործակցութեան հեռանկարները եւ այն խնդիրներն ու ծրագրերը, որոնց կարելի է հետամուտ ըլլալ Եւրոպայի հետ համարկման շրջագիծին մէջ:

Կողմերը անդրադարձած են նաեւ շրջանային խնդիրներուն, մասնաւորապէս՝ արխագական տագնապը խաղաղօրէն լուծելու կարելիութիւններուն:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի ընկերային ապահովութեան պետական հիմնադրամին Միւնիքի մարզային վարչութեան տուեալներով, վերջին երկու տարիներուն մարզին ձեռնարկութիւնները հիմնադրամին մեծ չափերու պարտքեր չեն պատճառած: Ընթացիկ տարուան սկիզբէն 182 միլիոն դրամ փաստացի պարտքէն 120 միլիոն դրամը նախորդ տարիներէն կուտակուած պարտքերն են:

Կառավարութեան որոշումով եւ տնտեսական դատարանին վճիռներով անվճարուեալ ճանչուած քանի մը ձեռնարկութիւններ հիմնադրամին պարտք են 70 միլիոն դրամ:

Մարզային վարչութեան պետ Արա Պարոնեանի վկայութեամբ, 2001 թուականին ընկերային վճարումները չկատարելու պատճառով մարզին մէջ վարչական պատասխանատուութեան ենթարկուած են 200 պաշտօնատար անձեր, իսկ այս տարուան անցեալ երեք ամիսներուն անոնց թիւը արդէն նուազած է 180ի:

ՀԱՅԱՍՏԱՆ - ՊՐՈՒՆԷՅ ՏԱՐՈՒՍՍԱԼԱՄ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

15 Ապրիլին Հնդկաստանի մէջ Հայաստանի դեսպան Արմէն Բայրուրդեան եւ Հնդկաստանի մէջ Պրունէյի դեսպանը ստորագրած են երկու երկիրներուն միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման մասին ստորագրուած է նիւ Տելիի Պրունէյ Տարուսսալամի դեսպանատան մէջ: Ստորագրութեան արարողութեան էնք տեղի ունեցած զրոյցին ընթացքին երկու երկիրներուն դեսպանները բարձր գնահատած են դիւանագիտական յարաբերութիւններուն հաստատումը՝ յոյս յայտնելով, որ այդ քայլով երկկողմանի կապերը վերածուին լիարժէք համագործակցութեան:

ՄՈՒՒՄ

ԻՐԱՒԱՊԱՀՆԵՐ ԿԸ ԶԵՐԲԱԿԱԼԵՆ ԱՒԱԶԱԿԱՆՈՒՄԲԻ ՄԸ ՊԱՐԱԳԼՈՒԽԸ

18 Ապրիլին Մոսկուայի մէջ իրաւապահ մարմիններ ձեռքարկուած են յանցագործ խմբաւորումի մը պարագլուի Գրիգոր Ասրեանը:

Ըստ «Իզվեստիա» օրաթերթին, 53ամեայ Գ. Ասրեան ծնած է Պաքու եւ ժամանակ մը դեկավարած է «Հայկազ փրոմ» ընկերութեան վարչութիւնը: Անոր ղեկավարած աւագակախումը գողութիւններու եւ նիւթական չարաչահութիւններու պատճառով մեծ գումարներ ղրկած է:

Ներկայիս Մոսկուայի ոստիկանները կը փնտռեն աւագակախումներին մնացեալ անդամները:

ՄԵՐՁԱՌՈՐ ԱՐԵՒԵԼԵԻ ՀՈՎՈՒՄԿԱՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԼԻԲԱՆԱՆ

ԱՊՐԻԼԵԱՆ ՅՈՒՇԱՏՕՍ ՄԻԱՅԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆԸ

Գործընթացի, 24 Ապրիլ 2002, կտօնը առաջ ժամը 10:00ից, Կայ Աւետարանական Առաջին Եկեղեցւոյ մէջ, «Մեքսի» փողոց, Պէյրուք:

Պատգամաբեր՝
ՎԵՐ. ԺԻՐԱՅՐ ՍՈՂՈՒՄԵԱՆ
Գործադիր տնօրէն Ամերիկայի Կայ Աւետարանական Ընկերակցութեան

Ըաւասացեալ ժողովուրդը կը հրաւիրուի ներկայ ըլլալու սոյն պաշտամունքին՝ ոգեկոչելու համար մեր բիւրաւոր նահատակներուն յիշատակը:

ԼՈՒԻ «ՆՊԱՍՏ ԱՇԽԱՍԱՆՔԻ ԴԻՄԱՑ» ԾՐԱԳԻՐ

Անցեալ տարի Լոուիի մարզին մէջ 717 հոգի (290ը՝ Վանաձորի մէջ) ժամանակաւոր աշխատանք գտած է «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրի շրջագիծին մէջ: 27 միլիոն 177 հազար դրամի բարեկարգման եւ այլ աշխատանքներ կատարուած են մարզային կեդրոնին եւ մարզի միւս շրջաններուն մէջ:

Վանաձորի զբաղուածութեան տարածքային կեդրոնի տնօրէն Արա Առաքելեանի համաձայն, մարզին մէջ արդէն սկսած է այս ծրագրին շրջանակներուն մէջ այս տարի իրականացուելիք աշխատանքներուն նախապատրաստութիւնը: մօտ 8 ծրագիր քաղաքապետարանին եւ թաղա-մասային հիմնարկներու կողմէ արդէն ներկայացուած է կեդրոն:

Կը նախատեսուի, որ այս տարի կ'ընդլայնուի ծրագրին շրջանակները, իսկ աշխատանքի ծաւալները կը կրկնապատուուին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՈՔԵԻՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐԻԿ ԵՐԳԻՉՆԵՐ»ՈՒՆ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ

Վերջերս հրատարակուած է «Հայաստանի Փոքրիկ Երգիչներ» մանկապատանեկան երգչախումբին (գեղարուեստական ղեկավար՝ Տիգրան Հեքեքեան) խոսալիկներուն (Սի. Տի.) այլոյցը, որ կը բովանդակէ աշխարհի հոգեւոր երաժշտութեան նմուշներ՝ Ծրագրէն մինչեւ մեր օրերը (հայ, անգլիացի, հոլանտացի, գերմանացի, ֆրանսացի, հունգար, ֆինլանտացի եւ ռուս հեղինակներու ստեղծագործութիւններ): Այլոյցին առաջին խոսալիկին մէջ ներառուած է 5-17րդ, երկրորդին՝ 17-19րդ, երրորդին մէջ՝ 19-20րդ դարերու հոգեւոր երաժշտութիւն: «Փոքրիկ Երգիչներ»ուն կատարողութեամբ կը լսուին Մաչտոցի, Օձնեցիի, Շնորհալիի, Նարեկացիի, Փալեսթրինայի, Մոնթեվերտիի, Պախի, Հենսելի, Մենտելսոնի եւ Ռախմանինովի ստեղծագործութիւնները:

ԿԱՊԱՆԻ ՄԵՏԱՂԱՁՈՒԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ Կ'ԱՒԵԼՅՆԷ ԻՐ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ներկայիս իր նախկին գորութեան 60 - 70 առ հարիւրին չափով աշխատող կապանի մետաղաձուլական գործարանը Մարտ ամսուան ընթացքին արտադրած է 516 թոն պղինձի խտանիւթ, 250 թոն բազմամետաղային հումք եւ 300 թոն գինիի հումք:

Գործարանի տնօրէն Գառնիկ Առաքելեանին համաձայն, գործարանը ծրագրած է այս տարուան ընթացքին ամսական գումար արտադրուող տարրեր տեսակի խտանիւթերու ծաւալը հասցնել 1500 - 1600 թոնի:

Այդ մէջ կը կարելիութիւն կու տայ աշխատողներուն թիւը գործարանին մէջ ներկայի 900ին փոխարէն հասցնել 1000 - 1200ի:

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԱՐՏԱԳԱՂԹՈՂՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ՝ 800 ՀԱԶԱՐԷՆ 1 ՄԻԼԻՈՆԻ ՄԻՋԵԻ

Ըստ մասնագիտական ուսումնասիրութիւններու, անցեալ տարիներուն Հայաստանէն մեկնած քաղաքացիներուն թիւը կը տարուրբերի 800 հազարէն 1 միլիոնի միջեւ:

Արրահամեանի, պաշտօնական տուեալներով, Հայաստանի մէջ՝ 1200 ներկայիս Գերմանիոյ եւ Դանիոյ մէջ իրրեւ անօրինական արտագաղթող ընդհանուր արտաքսուին:

Կ.Բ.Ը.Մ. - Կ.Ե.Ը. «ԱՆՈՐԱՆԻԿ» ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

ԱՊՐԻԼԵԱՆ ԶԵՌԱՐԿՆԵՐ

Կ. Կ. Գ. Ա. Ա. ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ՝

ՓՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՅՈՎԸԱՆՆԻՍԵԱՆ

Կը ներկայացնէ՝

ԶՐՈՅՑ - ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԲ ՍԸ

- Հրապարակային դասախօսութիւն: «Ազգային ինքնորոշման իրաւունքը եւ տարածաշրջանային հակամարտութիւնները (Անդրկովկաս - Միջին Արեւելք): Այսօր՝ Երկուշաբթի, 22 Ապրիլ 2002, երկուշաբթի ժամը 8:30ից, Կ.Բ.Ը.Մ. Տեմիրձեան կեդրոն՝ Բ. յարկ:
- Դասախօսութիւն AUB Ամերիկեան համալսարանի մէջ (Isam Fares Hall): The Regional Conflicts and the Right of National Self Determination Երեքշաբթի, 23 Ապրիլ 2002, կտօնը ետք ժամը 2:00ից:

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԲԸ

VIDEOԻ ԿԱՍ ԸՈՒ ՎՐԱՅ VIDEO CLIPՆԵՐ՝

ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԷԼԵԻՃԵԱՆ ԸԱՍՏ. Ըեռ. 01 / 261696, 03 / 250518

FOR THE SAKE OF OUR HEALTH AND YOURS **DON'T SMOKE**

FOR THE SAKE OF OUR NERVES AND YOURS **KEEP SILENT**

WATCH OUT! BABY ON BOARD

ԱՏՏԻԼՈՒ ԱԲԻԼ

EVEN THOUGH YOU'RE INSURED **DRIVE SAFELY**

ԱՏՏԻԼՈՒ ԱԲԻԼ

We Give Services. Not Just Policies.

ԱՖՏԻԼ AFHIL

Աֆտիլ ԸՄԼ, Բ. Յարկ, Գեռ. ԵՒ Յարկ. (01) 262231 - 242556 242557 (Imm. AFED, 2ème étage. Tél. and Fax: (01) 262231 - 242598 - 242597

Գրասխանաբանական Վերանայումի

ԱՆՅԱՐՄԱՐ ՊԱՏԿԵՐԸ

ՄԻՃՏ ԿԱՏԱՐԱԾ ԵՆԸ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՆ՝ ԻԲՐԵԻ ԺՃՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԱՊԱՅՈՅՑ: ՍԱԿԱՅՆ ԹԵՐԹԵՐՈՒ ՄԵՋ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԿՈՂՔԻՆ ԿԱՆ ՈՒՐԻՃՆԵՐ, ՈՐՈՒՔ ԵՐԲԵ ԶԵՆ ԿՐԱՏԱՐԱԿՈՒԻՐ, ՈՐՈՎԿԵՏԵԻ ԿԸ ԲՈՎԱՆԴԱԿԵՆ ՑՆՑԻՉ ՊԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ. «ՏԸ ԿԱՐՏԻՃԸ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ ՅՕԴՈՒՄԸ ՄԸ ԿԸ ԿԵՐԼՈՒԾԵ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԳՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Գրաքննությունը բառը ինքնին դող կը պատճառէ ազատականներուն: Մասնաւոր՝ երբ խօսքը կը վերաբերի լուսանկարի մը գրաքննութեան: Լուսանկարները ճշմարտութիւնը ըսելու կը ծառայեն: Անոնք կրնան պատկերել պահ մը, որ ոմանք պիտի չուզէին, որ մենք տեսնենք: Որքան ալ նուազ հաւատք ընծայենք մամուլին եւ ծանուցումներուն, տակաւին կը պահենք այն ներհուն հաւատքը, թէ լուսանկար մը կ'արտացոլացնէ իրականութիւնը: Անիկա մատահոսութիւն կը ներշնչէ:

Լուսանկարները խափանելը, գանոնք կամ անոնց բովանդակութիւնը աղաւաղելը Մառի, Ստալինի կամ Չուրչիլի նման բռնատէրերու գործն է եւ կը ծառայէ իշխողութեան ջնջելու անյարմարը կամ անբաղձալին: Բռնատիրական վարչաձեւեր կամ անգուժ գործատէրեր այս միջոցին կը դիմեն որոշ մտածողութիւն մը քաջալերելու եւ բոլոր այլ տեսակի մտածողութիւնները ջնջելու համար: Օսմանեան կայսրութիւնը նոյն նպատակով չէ ուզած, որ տեսնենք 1915ի հայկական ջարդերուն ապացոյցները: Այս պատճառով է, որ Հիթլերը կը խուսափէր հրապարակել իր ճառերուն փորձերը պատկերող լուսանկարները, որոնք մէջ խելակորոյր պարողի կը նմանէր: Հենրի Ֆորտ նոյն պատճառով չէր ուզեր, որ մարդիկ գիտնային, թէ իր դժգոհ վերակացուները ինչպէս սարսափի կը մատնէին իր աշխատաւորները:

Սակայն պէտք է գրաքննութիւն տեղի ունենայ ազատ եւ ժողովրդավար երկրներու մէջ: Այդպէս չէ՞: «Անտրէքսփոլո» գիրքը, որ լոյս կը տեսնէ Ապրիլ 18ին, հակառակը կ'ապացուցէ: «ՏԸ Կարտիլը» թերթին կողմէ հրատարակուած այս գիրքը կը ներկայացնէ գրաքննուած եւ աղաւաղուած լուսանկարներ, զորս երբեք պէտք չէր տեսած ըլլային: (Գիրքին մէջ հրատարակուած լուսանկարները այս օրերուն կը ցուցադրուին Լոնտոնի մէջ): Գրաքննութիւնը միշտ իր պատճառաբանութիւնները ունի: Կարելի է հասկնալ կամ արդարացնել ժողովրդավար պետութիւններու կիրառած գրաքննութիւնը պատերազմի ժամանակ, երբ բոլոր տեսակի պատկերներն ու տեղեկութիւնները պետական գաղտնիքի եւ ազգային բարոյականութեան հարց կը դառնան: Ա. Աշխարհամարտին րիտանացի լուսանկարիչներու արտօնուած չէր նկարել ռազմաճակատի դիրքերը. օրաթերթեր պետութեան հետ պատուով համաձայնութեամբ մը որոշուած էին հրատարակել խրամատներու եւ վիրաւորներու լուսանկարները: Բ. Աշխարհամարտին, փոխանակ Պլիքի անխնայ լուսանկարները հրատարակելու, բրիտանական օրաթերթեր երկրին պատերազմական վիճակը կը ներկայացնէին Լոնտոնի Մ. Փօլ եկեղեցիին մուտքէն յառնող ռազմիկ լուսանկարով: Ասիկա չի նշանակեր, թէ խրամատներու մէջ ապրուած սարսափելի տեսարանները կամ Պլիքը չեն լուսանկարուած: Այդ լուսանկարները պարզապէս չեն հրատարակուած: Սակայն ինչ պիտի պատահէր, եթէ անոնք հրատարակուէին թերթերու առաջին էջերուն վրայ: Բրիտանիոյ ժողովուրդը արդեօք լուսն պահպանողականութեամբ պիտի դիմաւորէր Ա. Աշխարհամարտը, եթէ տեսնէր Սոմի մէջ պայթումներու գոհ գացած իր երիտասարդ զաւակները: Արդեօք Տանքըրթի ռզին պիտի ընկճուէ՞ր Քոկլենթրիի աւերակներուն տակէն դուրս բերուած ածխացած մարմիններուն ի տես:

Իրօք, լուսանկարչական գրաքննութիւնը ընդհանրապէս տեղի կ'ունենայ պատերազմի վայրերէն հեռու, նրբօրէն եւ ծածուկ, օրը օրին պատասխանատուներու կայացուցած որոշումներով, թէ ինչ բան պէտք է տեսնենք եւ ինչ՝ չտեսնենք: Ասիկա իր կաթիլ-կաթիլ ազդեցութեամբ աստիճանաբար կը փոխէ մեր աշխարհահայեացքը՝ խթանելով նախատիպարներու ստեղծումը, թաքցնելով բաներ, որոնցմէ պիտի ամչնայինք, պահպանելով «չափանիշներ»:

Երբեմն որոշ չափի գրաքննութիւնը արդարանալի կը թուի ոմանց: 1993ի Հոկտեմբերին ամերիկացի գիտնորներ Մոկատիլոյի մէջ (Սոմալի) կը մասնակցէին ՄԱԿի փրկութեան աշխատանքներուն, երբ պատերազմի իշխան Այտիի գիտնալները յարձակեցան անոնց վրայ: 18 գիտնորներ սպաննուեցան՝ ընդվզումի ալիք մը բարձրացնելով Ամերիկայի մէջ: Զինուոր մը խոչտանգուեցաւ եւ քաջըռուեցաւ փողոցներուն մէջ: Փօլ Ուաթսըն լուսանկարից տեսարանը, որ կը յիշեցնէր ամերիկացի սպիտակամորթներու կողմէ սեւամորթ տղամարդոց քանակութիւնը: Լուսանկարին մէջ կ'երեւէին գիտնորին ամորձիքները: Երբ «Թայմ» շաբաթաթերթը հրատարակեց լուսանկարը, անիկա արդէն փոխուած էր եւ ամորձիքները ծածկուած էին: Արդեօք ասիկա արդիւնք էր մեռելային նկատմամբ յարգանքի, թէ ամերիկեան կեղծ պարկեշտութեան: «Օրիակները շատ խօսուն է», - կ'ըսէ Ուաթսըն: Սեւաշխարհէն գայթակղեցուցիչ բան մը գրաքննելու որոշում կայացած է, իսկ դիակ մը պղծելու նախատիպըն ու բրտութիւնը անվնաս կր նկատուին ժողովուրդին ներկայացնելու համար:

Նման պարագաներու յայտնի չէ, թէ ով ինչ բանէ կը պաշտպանուի եւ ինչու: Նոյնիսկ պատերազմի

տերազմի գրաքննութիւնը միշտ ալ բրտութեան սարսափազդու տեսարաններ ծածկելու չի ծառայեր: Պետութիւններ կ'ուզեն քաջալերել այն խաբկանքը, թէ պատերազմը պարզ բան մըն է իրենց եւ մեզի համար: Թշնամիին նկարները, բացի այն պատկերներէն, որոնք կը խթանեն նախատիպարներու ստեղծումը, ինչ թ աչքով կը դիմաւորուին, կը գրէ «Մակնրմ Գորթո» ընկերութեան նախկին տնօրէնը՝ Ֆրիտի ծոնգ Կրիֆթիթց, «Անտրէքսփոլո» գիրքին մէջ լոյս տեսած յօդուածի մը մէջ: Երբ թշնամին կը ներկայացուի իր դէմքով, բարդ տիպար մը արտացոլացնող դէմքով, զայն սպաննելը աւելի դժուար կը դառնայ: Ամերիկացիք «անդիմագիծ թշնամիի» այս պատկերը տարածած են Վիեթնամի պատերազմին ժամանակ: «Միայն ամերիկացիները չեն, որոնք իրենց թշնամիին աչքերուն չհանդիպելու ճշդու մէն խորշած են, - կը գրէ Կրիֆթիթց: Մայկոնի մէջ իւրաքանչիւր թղթակից կը ցանկար տեսնել հակառակորդին դէմքը»:

Բազմաթիւ լուսանկարիչներ շատ հեռու գացած են թշնամիին դէմքերը տեսնելու համար: Սակայն անոնց լուսանկարները վերջաւորութեան նետուած են խմբագրատան մը աղբամանին մէջ: Հարոյտ Իվանզ կը յիշէ պատմութիւնը պտուտայական կրօնաւորի մը, որ ինքզինք ողջակիցած է Սայկոնի մէջ հրապարակին վրայ: «Իրապէս անբեկարայելի էր: Ծատեր չէին հաւատար պատահածին», կ'ըսէ ան: Այսուհանդերձ այժմ խորհրդանիշի վերածուած կրօնաւորին լուսանկարը, որ ցնցիչ վաւերականութեամբ մը պիտի օժտէր տեղեկութիւնը, չէ հրատարակուած, հաւանաբար որովհետեւ բարդ հարցական մը կրնար ստեղծել ընթերցողին մտքին մէջ. «Նիւ Եոքթ Թայմ» օրաթերթը զայն նկատած էր «անարմար» Ամերիկայի նախաճաշի սեղաններուն համար:

«Լայֆ» թերթին խմբագիրները 1943ին պաշտպանած են հրատարակութիւնը սարսափազդու լուսանկարի մը, որ կը պատկերէր ճափոնցի մը աղաղակող դանկը՝ հրկիցուած հրատարակի մը վրայ: «Պատերազմը տհաճ է, վայրագ ու անմարդկային: Եւ ասիկա մոռնալը աւելի վտանգաւոր է, քան՝ յիշեցումներուն առեւթած ցնցումը», գրած է թերթը: Որոշումը յանդուգն էր իր ժամանակներուն, որովհետեւ լուսանկարը ցոյց կու տար ոչ թէ ճափոնցիներուն, այլ նաեւ դաշնակիցներուն վայրագութիւնը եւ ամբողջ պատերազմին վայրագութիւնը: Նոյն զգացողութեան մղուած էր 1991ին Մոցի պատերազմին ընթացքին դաշնակից ուժերու ռմբակոծումներուն պատճառով



ԶՈՒՄԻՐՈՒ ՄԻՋՈՅԱՌՈՒՄ, ԹԵ ԵՐԿՐՈՒՄ

Անցեալ շաբաթ «Ռոյթըր» լրատու գործակալութիւնը հրապարակեց պաղեստինեան «Տաթի» կազմակերպութեան ղեկավարներու Մարուան Ալ Պարզուքիի ձերբակալութեան լուսանկարը, որուն մէջ խրայելացի գիտնորներուն դէմքեր «գրաքննուած» են:

Հալած ու ածխացած իրաքցի գիտնոր մը պատկերող լուսանկարի մը հրատարակութիւնը «Օպըրվըր» թերթին մէջ: Որոշումը դժգոհ էր, բայց անհրաժեշտ, որովհետեւ կը միտէր ցոյց տալ, թէ ենթադրաբար «գիտութեան» վրայ հիմնուած, լեյթըրով հակադրուած եւ նոյնիսկ «ցաւագործ» Մոցի պատերազմը խորքին մէջ տարբեր չէր միւս պատերազմներէն: Անշուշտ օրաթերթը բողոքագիրներ ստացաւ: Սակայն որոշումին կայացումը ինքնին ազատ ժողովրդավարութեան մէջ տեղեկութիւններու հոսքը ղեկավարելու կը վերաբերէ: Նմաբար, լուսանկարիչը եւ քաղաքագէտը պարտաւոր են ընտրութիւն մը կատարելու եւ կատարելու: «Բազմաձայն մեր մամուլին մէջ գրաքննութեան աւելի խորակներու մէջ կը արիւնջ, - կը գրէ Իվանզ: - Իրբեւ խմբագիր փորձ մը ըրի գիտնալու համար, թէ լուսանկարին մէջ պատկերուած բրտութիւնը կամ խելագարութիւնը արդեօք ընկերային կամ պատմական կարեւորութիւն կը ներկայացնէր, եւ եթէ այո, ապա ցնցիչ մանրամասնութիւն, որ կը բովանդակէր լուսանկարը, անհրաժեշտ էր ցուցադրել, որպէսզի մարդիկ լաւապէս հասկնային պատերազմին իրականութիւնը: Երբ իշխողութիւնները կը դիմեն ճշդու մէջ, ատիկա ցոյց կու տայ, թէ կատակածներ ունին իրենց արարքներուն նկատմամբ: Ժիշդ այդ ատեն մանրամասն տեղեկութիւններու վրայ հիմնուած բանավէճ մը կրնայ կանխել աղէտ մը»:

Նոյնիսկ լուսանկարիչները պարտաւոր են կամայ թէ ակամայ նման ընտրութիւններ կատարելու:

ՃՆՇՈՒՄ՝ ԽՕՄՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 11ԵՆ ԵՏԸ ԱՆՎԱՆԴՈՒԹՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱՒԱԼԻ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԻՍԼԱՐԿՆԵՐՈՒ ՄԵՋ: «ԻՆԹԵՐՆԵՇՆԸԸ ԵՐԸԸՏ ԹՐԻՊՈՒՆ» ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ԿԱՇԿԱՆԴՈՒՄՆԵՐՈՒՆ ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Խօսքի ազատութիւնը կաշկանդելու բազմաթիւ միջոցներ կան, եւ պայման չէ, որ օրէնքներ սահմանուին: Այսօր կրնաս մէկու մը ըսել, որ լուսն, կրնաս բեմէն վար առնել զայն, սեւ կէտ մը աւելցնել անոր կենսագրական թղթածրարին մէջ, սահմանափակել անոր խօսելու ժամերն ու վայրերը:

